ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.11. Իրան: Բնակչությունը: Տնտեսությունը

• • •

Տարբեր ժամանակաշրջաններում տեղի են ունեցել հայերի տեղաշարժեր պատմական Իրանի տարածք, որտեղ նրանք իրենց ավանդ են ունեցել երկրի հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքում: Իրանահայերը հայտնի արհեստավորներ են՝ ոսկերիչներ, արծաթագործներ, գորգագործներ ու կահույքագործներ: Հարկ է նշել, որ 17-րդ դարում Շահ Աբասը մոտ 300 հազար հայ (հիմնականում Ջուղայից) տեղահանեց և տարավ Պարսկաստան՝ արհեստները, վաճառականությունը զարգացնելու նպատակով: Այն կոչվեց ժողովուրդների մեծ գաղթ՝ «Մեծ սուրգուն»: Հայերը հայտնի են նաև բժշկության, գիտության, մշակույթի, գործարարության և այլ ոլորտներում:

• • •

Իրանի բնակչությունը տեղաբաշխված է խիստ անհավասարաչափ: Միջին խտությունը՝ 54 մարդ քառ. կմ: Խիտ են բնակեցված Կասպից լճի հարավային, հարավարևմտյան ափամերձ շրջանները, Միջագետքի դաշտավայրի հարավարևելյան փոքր հատվածը: Չափազանց նոսր են բնակեցված Իրանական լեռնաշխարհի ներքին, արևելյան և հարավարևելյան լեռնային շրջանները: Երկրի ներքին և արևելյան շրջանների բնակչության մի ստվար խումբ դեռևս վարում է կիսաքոչվորական կյանք:

• • •

Այն թողարկում է գազով և գոլորշիով աշխատող տուրբիններ, ինքնաթիռներ և ուղղաթիռներ, ավտոմոբիլներ (6 ավտոմոբիլային ընկերություն՝ «Իրան Խոդրո», «Կերման Խոդրո» և այլն), կենցաղային տեխնիկա, էլեկտրոնիկա, գյուղտեխնիկա, տնտեսության տարբեր ոլորտների համար սարքավորումներ: Երկրի ՀՆԱ-ի 10%-ը բաժին է ընկնում ավտոմոբիլաշինությանը:

Հավաքում են նաև ֆրանսիական և ռումինական մակնիշի ավտոմոբիլներ: Ընդհանուր առմամբ տարեկան արտադրվում և հավաքվում է ավելի քան 2 մլն. մարդատար և բեռնատար ավտոմեքենա, ավտոբուս: Մեքենաշինության գլխավոր կենտրոններն են **Թեհրանը**, **Քերեջը**, **Սպահանը**, **Ահվազը**:

Արագ զարգացող ճյուղ է քիմիականը, որը հենվում է սեփական նավթի, գազի և աղերի բազայի վրա: Զարգացած է նավթա-գազաքիմիան: Թողարկում են ռետինետեխնիկական իրեր, պլաստմասա, լաքեր, ներկեր, պարարտանյութեր, լվացող միջոցներ: Զարգանում է գիտատար փոքր քիմիան:

Թեթև արդյունաբերությունը հին, ավանդական, ամենատարածված ճյուղն է, որում գլխավորը տեքստիլն է: Այն հենվում է սեփական հումքի (բամբակ, վուշ, կենաֆ, ջուտ, բուրդ, մետաքսյա բոժոժ) և արհեստական ու սինթետիկ մանրաթելերի բազայի վրա: Ավանդական և եկամտաբեր ճյուղ է գորգագործությունը, որի արտադրանքը մեծ պահանջարկ ունի համաշխարհային շուկայում: Կենտրոններն են **Քերմանը**, **Թավրիզը**:

Դարեր շարունակ Իրանը հայտնի է եղել արհեստագործական արտադրանքով՝ ոսկերչական, արծաթագործական, փիրուզյա և փայտյա:

Գյուղատնտեսությունը գտնվում է զարգացման տարբեր մակարդակների վրա: Խոշոր քաղաքների շուրջ ձևավորվել են զարգացած, ինտենսիվ երկրագործական շրջաններ, իսկ ներքին, թույլ յուրացված շրջաններում տարածված է ագրոտեխնիկական հին մեթոդներով աշխատող էքստենսիվ գյուղատնտեսությունը:

• • •

Տրանսպորտը: Երկրի աշխարհագրական դիրքը հնարավորություն է տալիս ցամաքային տրանսպորտի բոլոր տեսակներով կապ հաստատել հարևան երկրների հետ: Բայց հարևան երկրներում՝ Հայաստան,Ադրբեջան, Իրաք, Աֆղանստան, քաղաքական անկայուն վիճակը սահմանափակում է այդ հնարավորությունը: Իրանը ունի բավականին զարգացած տրանսպորտային ենթակառուցվածքներ: Գլխավոր դերը ուղևորա և բեռնափոխադրումներում պատկանում է ավտոմոբիլայինին: Իրանի խճուղիները համարվում են լավագույնը Հարավարևմտյան Ասիայում:

• • •

Իրանի բնակչության բնական աճը, հասնելով 1.5%-ի, վերջին տասնամյակներում շոշափելի նվազել է: Բնակչության սեռային կազմում գերակշռում են տղամարդիկ՝ 50,8%: Նախկինում ավելի բարձր էր տղամարդկանց տեսակարար կշիռը: Երկիրն ունի միգրացիայի դրական **սալդո** (արտա-

գաղթողների և ներգաղթողների թվաքանակի տարբերությունը), այսինքն արտագաղթը (դեպի բարձր վարձատրվող տարածաշրջաններ) գիջում է ներգաղթին: Երկիր գալիս են ավելի շատ նավթարդյունաբերության շրջաններում աշխատելու համար, հատկապես՝ Հարավային Ասիայի երկրներից:

• • •

Երկրում հաշվվում է 8 քաղաք՝ 1 մլն և ավելի, և շուրջ 20 քաղաք՝ 500 հազար և ավելի բնակչությամբ: Քաղաքներին բնորոշ է հին և նոր ճարտարապետությունների՝ ժամանակակից քաղաքաշինության համադրումը: Խոշոր քաղաքներն են՝ **Մաշհադը**, **Սպահանը**, **Շիրազը**, **Թավրիզը**, **Ահվազը**, **Ղումը**:

• • •

Երկիրը աչքի է ընկնում նաև գազի պաշարներով (35.5 տրլն խմ.,խոշորագույն հանքավայրը **Հարավային Փարսն** է) (աշխարհի պաշարների 16,2%-ը): Այս ցուցանիշով գիջում է միայն Ռուսաստանին:Իրանում է նավթի համաշխարհային պաշարների 13,3%-ը, երկրորդը՝ Սաուդյան Արաբիայից հետո: Երկրում տարեկան արտադրվում է ավելի քան 180 մլրդ կվտ. ժ. էլեկտրաէներգիա, որի 93%-ը բաժին է ընկնում ջէկ-երին, իսկ մոտ 7%-ը ջրէկ-ներին: Երկրում գործում են հողմային, արևային և երկրաջերմային էլեկտրակայաններ: Գործում է միակ՝ **Բուշեհրի** ատոմակայանը: Խոշոր ջէկ-երը կառուցված են՝ **Թեհրանի**, **Աբադանի**, **Սպահանի** մոտակայքում:

• • •

Անասնաբուծությունը դեռևս զարգանում է էքստենսիվ ուղղությամբ: Բուծում են մանր եղջերավորներ՝ ոչխարներ և այծեր, խոշոր եղջերավոր անասուններ, ուղտեր: Զարգացած է ձկնաբուծությունը և ձկնորսությունը: Իրանը համաշխարհային շուկա է արտահանում սև ձկնկիթ և մարգարիտ:

Խորհրդային տարիներին Արաքսի վրա կառուցված կամրջով մեծացել է Իրանի և Հայաստանի միջև կապը: Բազմատեսակ կապերի ընդլայնման արդյունքում մեծանում է երկաթուղային տրանսպորտի դերը հատկապես հարևան երկրների՝ Թուրքիայի, Թուրքմենստանի, Ադրբեջանի և Պակիստանի հետ և ներքին բեռնափոխադրումների ծավալում: